

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ԲԱՅԱՆԴՅՈՒՆ ԹԱՍԻՔ (Տաճկա-հայ պատանիների կեանքից). Թիֆլիս,
ուպ. Վարդանեանի, 1889 թ., փոքր քառաձալ, 88 եր., տառ
№ 12, գինը՝ 20 կոպէկ:

Գրքովը, որ բաղկացած է վեց
գլուխներից, կարդացում է մեծ հե-
տաքրքրութեամբ: Հեղինակը, պատ-
մելով իւր պատանեկան կեանքից մի
քանի դէպքեր, ներկայացնում է ալն
հանգամանքը, որը նրան ստիպեց
թողնել իւր հայրենի Հին-Բաղադէղը
և դիմել պանդխտութեան, վախճա-
տալով տնից՝ ծնողներից զաղտնի
Փախուստի պատճառը՝ թասիբն է,
պատւի զգացումը, որը հեղինակը կը
կորցնէր որպէս անհատ և որպէս
հալ ազգի անդամ, եթէ նա հպատակ-
ւէր ալն կարգ ու կանոններին, հան-
գամանքներին, որոնց մէջ գրւած է
հալ պատանին՝ տանը, ուսումնաբա-
նում, քաղաքում՝ տաճկական իշխա-
նութեան ներքոյ գտնւած մի երկ-
րում: Հեղինակը, որի ոճը կրում է
անկեղծ վիպական և խոստովանու-
թեան կնիք, ներկայացնում է մեզ
իւր հայրենի քաղաքի հալ վարժապե-
տի և նորա վարդապետութեան պատկե-
րը ամենադժնալ գծերով:—Կեղծա-
ւոր, կաշառակեր, կոպիտ, տգէտ: Նա

ալնքան կաշառակեր է և փչացած,
որ թուրք լամուկներն անգամ նը-
րան շաքարով և ալ իրեղէններով
կաշառում էին, որպէս զի նա, վար-
ժապետը, ծեծէ իւր ալն աշակերտ-
ներին, որոնք քաջութիւն են ունե-
նում նրանց, ալ թուրքի լակոտնե-
րին, դիմադրել, ծեծել, երբ սոքա ա-
մենաանամօթ կերպով ուզում են
կողոպտել և ծեծել վարժապետի ա-
շակերտներին: Վարժապետը իւր
սպառնալիքներով և ֆալախ կալի
պատիժներով միանգամալն ուզում է
արմատախիլ անել հալ պատանու
սրտից սորա պատւի զգացումը՝ մատ-
նելով նրան թուրք լամուկնե-
րի ամենաանտանելի, փչացած ու
զոռոզ ինտրինկտներին: Հեղինակը
աներկբալի կերպով ուզում է ա-
պացուցել, որ հալը Տաճկաստա-
նում ստրուկ է շնորհիւ հալ ծնո-
ղի, հալ վարժապետի փուչ և վը-
նասակար դատարարական և որ
հալիցն է կախւած իրան դատարա-
րակել՝ ալնպէս, որ զէպի նա պատ-

կառանք և անգամ վախ դղան թուրքերը, Գրքուկի մէջ բերւած են երկու դէպք, որտեղ հաշ պատանիները կուտամ են թուրք պատանիների հետ քաղաքից դուրս, անվախ կերպով, իրանց թասիբի համար, Առաջին լաղթութեան հետևանքն է լինում՝ հալածանքը վարժապետի կողմից, երկրորդ լաղթութեան հետևանքն է լինում՝ փախուստը հալածանի քաղաքից, ամօթաբեր հալածան-

քից ու նախատինքից ազատւելու համար, Գրքուկի մէջ բերւած է նաև ջրիդ խաղալու մի գեղեցիկ նկարագիր:

Ամբողջը անում է շատ լաւ տպաւորութիւն. և մենք կ'ուզէինք, որ այդ գրքուկը ամեն ընթերցող պատանու և ուսումնարանական գրադարանի սեպհականութիւնը դառնար:

Ա.

ԳԱՐԻԻԷԼԻ ԱՆԴՐԷԱՍ, Թարգմանութեամբ Գրիգ. Շահրուղաղեանցի՝ ԲՆԱԻՈՐՈՒԹԵԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆԸ. Թիֆլիս, տպարան Մարտիրոսեանցի, 1889 թ., միջակ քառածալ, 200 էրես, տառ № 12, գինը՝ 60 կ.:

Գիրքը գրւած է այս բնաբանի վերայ. «Ի՞նչ է պահանջում իտալացիների մէջ բնաւորութիւն կրթելու համար—իբրև հիմունք քաղաքացիական արխարտութեան, կատարեալ ուղղամտութեան և սրանց համապատասխան գործունէութեան:

«Որո՞նք են զեկամարող սկըզբունքները և այդ նպատակին հասնելու գործնական միջոցները»:

Ravizza di Milano-ի մրցանակաբաշխ մասնաժողովը, որ նշանակել էր այդ թեման 1877-ին, արժանացրեց Բարի իտալական քաղաքի արհեստագիտական արքունի ճեմարանի իտալական գրականութեան պրոֆէսոր Գաբրիէլի՛ի այս աշխատութիւնը պատշաւոր լիշատակութեան միաջն, գտնելով, որ գիրքը չի տալիս բնաբանի գործնական մասի լիակատար լուծումն: Բայց նա զըտ-

նում է, որ սա մի լուրջ աշխատանք է և որ հեղինակը հմտութեամբ ներկարագրում է այն լատիւթիւնները, որոնք անբաժան են կազմակերպւած բնաւորութիւնից:

Գիրքը բաժանւած է երկու մասի. առաջինում հեղինակը խօսում է բնաւորութեան մասին առհասարակ, բացատրելով թէ ի՞նչ է բնաւորութիւն ասած բանը, որոնք են նորա տարրերը, ի՞նչ են նորա լատկանիչները. երկրորդ մասում հեղինակը խօսում է բնաւորութեան կազմակերպւելու մասին տանը, ուսումնարանում և հասարակական ու պետական կեանքի մէջ: Առաջին մասը թէօրիական է, երկրորդը՝ գործնական:

Թէօրիական մասում Գաբրիէլին առանձին ինքնուրոյնութիւն չի ցուց տալիս. բայց նա լաւ դասաւորել է